ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. ապրիլի 28-ից մայիսի 1-ը ք"Փարիզ (Ֆրանսիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Աշոտ Մուրադյան - ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ֆրանսիայի Հանրապետություն, ք. Փարիզ, ապրիլի 28-ից մայիսի 1-ը

3. Հրավիրող կողմը՝

Հրավերը ստացվել է «Հարկային տեսուչներն առանց սահմանների» (Tax Inspectors without Borders - TIWB) ծրագրի քարտուղարության կողմից, որում նշված է, որ Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) համատեղ նախաձեռնություն հանդիսացող TIWB-ի շրջանակներում հրավիրվում են գործընկեր վարչակազմերի ներկայացուցիչներ, փորձագետներ, տարածաշրջանային/միջազգային կազմակերպությունների անդամներ և դոնորներ՝ ս.թ. ապրիլի 29-ից 30-ը մասնակցելու շահագրգիռ կողմերի հանդիպմանը, որը տեղի կունենա Միջազգային էներգետիկ գործակալությունում (Հասցե՝ 9, rue de la Fédération, 75015 Paris):

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր՝ մասնակցել Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) համատեղ «Հարկային տեսուչներն առանց սահմանների» (Tax Inspectors without Borders - TIWB) նախաձեռնության շահագրգիռ կողմերի հանդիպմանը:

5. Քննարկված թեմաները՝

Ս. թ. ապրիլի 29-ից 30-ը կայացած «Հարկային տեսուչներն առանց սահմանների» (Tax Inspectors without Borders - TIWB) նախաձեռնության շահագրգիռ կողմերի հանդիպմանը հիմնականում քննարկվել են հետևյալ հինգ թեմաները.

- Հարկման ոլորտում միջազգային տեխնիկական աջակցության շուրջ բազմաշահառու համագործակցություն,
- Կայուն հարկային համակարգերի ստեղծման համար կարողությունների արդյունավետ կառուցում՝ բացեր, մարտահրավերներ և հնարավորություններ (առկա քաղաքական, ինստիտուցիոնալ և կազմակերպչական մակարդակի խնդիրների քննարկում),
- Կայուն հարկային համակարգերի ստեղծման համար կարողությունների արդյունավետ կառուցում՝ բացեր, մարտահրավերներ և հնարավորություններ (օրենսդրական կարգավորումներ, տեղեկատվություն և հմտություններ),
- TIWB-ի դիտարկումն առավել լայն համատեքստում՝ զարգացող երկրների կողմից TIWB-ից աջակցության ստացում՝ ավելի մեծածավալ հարկային եկամուտների ստացման նպատակով,
- TIWB-ի դերը հարկային կարգապահության ամրապնդման և ապօրինի ֆինանսական հոսքերի դեմ պայքարի գործընթացներում և վերջինիս կողմից տրամադրվելիք աջակցության ծրագրերի իրականացում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպմանը Աշոտ Մուրադյանը «Կայուն հարկային համակարգերի ստեղծման համար կարողությունների արդյունավետ կառուցում՝ բացեր, մարտահրավերներ և հնարավորություններ (առկա քաղաքական, ինստիտուցիոնալ և կազմակերպչական մակարդակի խնդիրների քննարկում)» թեմայի շրջանակներում հանդես է եկել ելույթով: Նա անդրադարձել է նաև պետական եկամուտների կոմիտեում TIWB-ի կողմից իրականացված ծրագրերին, որոնք վերաբերել են տրանսֆերային գնագոյացմանը և հարկային խարդախության դեմ պայքարի ամրապնդմանը, ինչպես նաև նշել է դրանց արդյունքում իրականացված բարեփոխումների մասին: Ա. Մուրադյանի կողմից նշվել է նաև նախնական գնագոյացման պայմանավորվածության (Advanced Pricing Agreement) շրջանակում

աջակցության նոր ծրագրի մեկնարկման մասին և կարևորվել է համագործակցության շարունակականության ապահովումը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՀՀ ՊԵԿ կողմից մշտապես բարձր է գնահատվել և գնահատվում միջազգային տարբեր հարթակներում գործընկեր երկրների մասնագիտական կառույցների հետ ոլորտային քննարկումների անցկացումը, մասնավորապես, հարկային վարչարարության ոլորտում արդիական և նորարական մեխանիզմների ներդրման համատեքստում:

Միջոցառմանը մասնակցելը թույլ տվեց քննարկել միջազգային լավագույն փորձը՝ ՀՀ-ում ներդնելու նպատակով, ներկայացնել և միջազգային փորձագիտական հանրույթում ավելի ճանաչելի դարձնել Հայաստանի փորձը, հաստատել միջազգային կապեր համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և փորձագետների հետ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Աշոտ Մուրադյան

03.05.2024թ